Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1422-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2023 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1422-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «**Եվրոպական միության երկրներ արտահանման նպատակով ձկան, ջրային կենդանիների, այլ հիդրոբիոնտների և դրանցից ստացված մթերքների մեջ վտանգավոր նյութերի առավելագույն քանակների հսկողության կանոնները սահմանելու մասին**» 1422-Ն **որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.**

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**3** Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին՝ 15-օրյա ժամկետում հաստատել ձկնաբուծությամբ զբաղվող և Եվրոպական միության երկրներ լիազոր մարմին

արտահանման հայտ ներկայացրած ձկնաբուծական տնտեսությունների կողմից ներկայացվող հաշվետվության ձևերը։»։

2) ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը.

3) որոշման հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ձկան, ջրային կենդանիների, այլ հիդրոբիոնտների և դրանցից ստացված մթերքների մեջ անասնաբուժական դեղամիջոցների՝ մնացորդային նյութերի հսկողությունն իրականացվում է Եվրոպական միությունում ընդունված ստանդարտներով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում։

4) որոշման հավելվածի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Լաբորատոր փորձարկումներով անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակների հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 898-Ն որոշմամբ սահմանված կարգով։»։

5) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Փորձարկման լաբորատորիաները՝ վտանգավոր նյութի հայտնաբերման դեպքում պարտավոր են մեկօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։